



րութեամբ. «ժամանակ» բառի փոխարէն գործածուած է «ամ»-ը, թէեւ երկուսն էլ բերուած են յոգնակի թուով եւ միեւնոյն նպատակադրումն ունեն՝ մատնանշել աւելի ընդարձակ ժամանակահատուած, տարիներ եւ ոչ թէ՛ կոնկրետ թուական: Բայց եւ անհերքելի է՝ այդ ճշգրիտ տարեթիւը մատնացոյց անելու անհրաժեշտութիւն եւս եղել է, քանի որ վիճաբար միաժամանակ նաեւ զրաւոր հրամանագրի, իրաւական ակտի դեր է կատարել: Շահնշահ Ա-ն այդ խնդիրը լուծել է ամենակարգում՝ առանձին նշելով 1222 թ., մինչդեռ Յովհաննէս Խաչենեցին տարեթիւը մատնացոյցել է ամենավերջում՝ «ՈՂ (1221) թուին»<sup>6</sup>: Հաղբատի 1221 թ. վիճաբար առաւել քան յստակ վկայութիւնը մայր եւ որդի թագաւորների մասին, յուշում է, թէ Արթիկի արձանագրութիւնում եւս համանման իրադրութեան հետ գործ ունենք: Այս վիճաբար «Աստուածաւծեալ թագաւոր» բնութագրումը պէտք է վերագրել ոչ թէ թամարին, թէեւ այդպիսի վկայութիւնը միանգամայն արդարացուած կարելի էր համարել, այլ նրա որդի Գէորգի-Լաշային, որը մահացել է 1223 թ., հետեւաբար եւ առաջին հերթին պէտք է յիշատակուէր: Հէնց նրա՝ թագաւոր օծուելու հանդէսն է յիշատակուում Հաղբատի 1210 թ. արձանագրութիւնում. «Այս գիր արձանագրեցաւ կտակ մշտընջենաւոր յամս աւծելոյ Աստուծոյ թագաւորաց թագաւորին Գէորգէ, որդոյ մեծ թագաւորին Թամարին»<sup>7</sup> եւ, որը, ինչպէս երեւում է, հայկական միջավայրում յայտնի իրադարձութիւն է եղել: Սակայն ժամանակագրութեան խնդրի այսպիսի լուսաբանութիւնը նաեւ հարց է յարուցում. Յովհաննէս Խաչենեցին կարիք է գգացել նշելու վրաց արքաներից երկուսի կառավարման ժամանակաշրջանը, քանի որ Հաղբատի երկարամեայ վանա-

հայրը 1221 թ. ամփոփել է իր առաջնորդական գործունէութեան արդիւնքները, հետեւաբար եւ աւելի ընդարձակ ժամանակագրական սահմաններ նշելու նրա ձգտումը կարելի է բնական համարել:

Շահնշահի թողած արձանագրութեան դէպքում այլ բացատրութիւն պէտք է փնտրել: Բնաւ պատահական չպէտք է համարել այն փաստը, որ Շահնշահ Ա-ն չի յիշատակում հօրեղբօրը՝ Իւանէ Աթաբէկին, չնայած չի անտեսում վերջինիս որդուն՝ «եղբաւրն իմոյ Աւագին»: Այս իրողութեան պատճառները պէտք է փնտրել ներընտանեկան փոխյարաբերութիւնների ոլորտում, թէեւ որոշակի դեր է կատարել նաեւ կոնկրետ ժամանակահատուածի պատմական իրադրութիւնը: Գաղտնիք չէ, որ Ջաքարիա Ամիրսպասալարի մահից (1212 թ.) յետոյ Իւանէն հասաւ փառքի եւ հզօրութեան գագաթնակէտին ու դժուարին կացութեան մէջ էր դրել ղեռեւս երիտասարդ ու անփորձ զարմիկին: Իւանէն ինքն էր ստանձնել հայկական ու վրացական զօրքերի հրամանատարութիւնը եւ այդպիսով զրկել էր Շահնշահին հայրական պաշտօնը զբաղեցնելու հնարաւորութիւնից: Շահնշահը միառժամանակ հարկադրուած էր բաւարարուել պակաս ազդեցիկ մանդատութիւններին պաշտօնով, թէեւ նրա հայրը ժամանակին միաւորել էր ամիրսպասալարի ու մանդատութիւններին պաշտօնները եւ փաստօրէն դարձել վրաց արքունիքի ամենաազդեցիկ պաշտօնեան՝ ստուերում թողնելով անուանապէս այդ դիրքը զբաղեցնող ճղոնդիդէլ-մծիգնոբարթութեան՝ ճղոնդիդէլ եպիսկոպոսին, արքունի դպրապետին: Արթիկի արձանագրութիւնը, ինչպէս նաեւ աւելի վաղ Անիում թողնուած որոշ վիճաբար, վկայում են, որ Շահնշահը յամառօրէն ձգտել է վերադարձնել հայրական պաշտօնները: Բաղաբական ենթատեքստը՝ հաշուի առնելու պարագայում պարզ է դառնում, թէ ինչու է Շահնշահ Ա-ն Թամար թագուհու

6 Դիւան հայ վիճագրութեան, պրակ IX, Կազմեցին Ա. Բարխուդարեան, Կ. Ղաֆադարեան, Ս. Սաղումեան, Երեւան, 2012, էջ 165-166:  
7 Նոյն տեղում, էջ 153-154:

մահից շուրջ մէկ տասնամեակ անց անսպասելիօրէն յիշում հանդուցեալ թագուհուն. չէ՞ որ նա ընդարձակ ժամանակահատուած նշելու կարիք առհասարակ չի ունեցել, քանի որ վիճաբար կատարուել է կոնկրետ դէպքի՝ հարկային արտօնութիւն շնորհելու առիթով, եւ տարեթիւը արձանագրելը լիովին բաւարար կարելի էր համարել: Բայց Ջաքարէի որդին հայրական դիրքը վերստին յիշեցնելու խնդիրն է լուծել, որը կարելի էր իրականացնել, գործող թագաւորից բացի, նրա փառապանծ մօրը եւս վկայակոչելու միջոցով:

Վիճաբարի յաջորդ արտայայտութիւնը՝ «ես հաւատարիմ ծառայ նորին», մեկնաբանութեան առումով դժուարութիւն չի ներկայացնում: Անիի արդէն վկայակոչուած արձանագրութիւնում իրեն Թամար թագուհու «հաւատարիմ ծառայ» է կոչում Ջաքարէ Ամիրսպասալարը<sup>8</sup>: Վերյիշենք նաեւ, որ Ջաքարէն մինչ այդ Հառիճում շինարարական աշխատանքներ է կատարել «յառջագս կենդանութեան տեառն իմոյ բարեպաշտ Թամար թագուհոյ»<sup>9</sup>: Այսպիսով հայերէն վիճաբարը համարժէքօրէն են արտացոլում գերակայ-ստորակայական այն փոխյարաբերութիւնները, որոնք հաստատուել էին Ջաքարեանների առաջին սերունդների՝ Սարգիս Մեծի եւ նրա որդիների ու վրաց արքաների միջեւ: Պարզում է, որ Շահնշահ Ա-ն եւս նոյն կերպ է պատկերացրել արքունիքի հետ իր կապերը:

Սակայն ո՞ւմ է նկատի ունեցել Շահնշահ Ա-ն «նորին» բնութագրմամբ՝ Թամարին, թէ՞ նրա որդի Գէորգի-Լաշային: Թուում է, թէ Ջաքարեան իշխանի «նորին»-ի ներքոյ պէտք է հասկանալ առաջին հերթին Գէորգի-Լաշային, քանի որ Թամարի կենդանութեան ժամանակ Շահնշահը ղեռեւս չափազանց երիտասարդ է եղել պալատական այդքան բարձր դիրք զբաղեց-

նելու համար: Թամար թագուհին որդուն արքայ գծելուց յետոյ վախճանուել է կամ էլ, եթէ ապրել է, գտնուել է ծանր հիւանդ վիճակում<sup>10</sup>: Հետեւաբար՝ Շահնշահ Ա-ն ոչ մի դէպքում չէր կարող Թամարի օրօք վարել մանդատութիւնները, առաւել եւս՝ ամիրսպասալարի պաշտօնը<sup>11</sup>:

Այս տեսակէտը լրացուցիչ կերպով փաստարկելու համար անհրաժեշտ է լուսաբանել նաեւ Շահնշահ Ա-ի ծննդեան ժամանակի եւ, համապատասխանաբար, 1222 թ. քանի տարեկան լինելու խնդիրը: 1217 թ. գրուած յիշատակարաններից մէկը Շահնշահին բնութագրում է որպէս «գեղեցկաբողբջ պատանի»<sup>12</sup>, մինչդեռ 1218 թ. Հաղբատում ընդօրինակուած ձեռագրի գրչի համար Շահնշահը ղեռեւս «մանուկ» է<sup>13</sup>: Շահնշահի դաստիարակ Խաւուասը նրան անուանում է «ղեռատէզն եւ նորաբողբջ»<sup>14</sup>, առանց կոնկրետացնելու, թէ որ ժամանակահատուածը նկատի ունի՝ Ջաքարէ Ամիրսպասալարի վախճանուելու ժամանակամիջոցը, թէ՞ յիշատակարանի գրութեան տարին՝ 1232 թ.: Այսպիսով կարելի է եզրակացնել, որ Շահնշահ Ա-ն 1210-ական թթ. վերջերին պատանեկութիւնից երիտասարդութիւն թեւակոխելու հասակում է գտնուել, որով էլ պէտք է բա-

10 Թամարի երկարատեւ եւ հիւծիչ հիւանդութեան մասին պատմում է «Քարթլիս ցխովրեպայում» (ქართველის ცხოვრება, Թ. Յեթրեյցեւոս Թյլոս-յեօոտ, օրծ., 2008, ՅՅ. 516-517):  
11 Ցայտօր հրատարակուած սկզբնաղբիւրներից Թամար թագուհին եւ Օսմանեան համատեղ յիշատակում են Նորատուսի արձանագրութիւններից մէկում («ի թագաւորութեանս Վրաց Թամարին եւ ինքնակալ տէրութեան Իւանէի եւ Օսմանեանի») (Դիւան հայ վիճագրութեան, պրակ IV, Կազմեց Ա. Բարխուդարեան, Երեւան, 1973, էջ 19), բայց իրականում Վրաց թագաւորի անունը եղծուած է, եւ Ս. Բարխուդարեանը եմպարաբար է վերականգնել «Թամար» անձնանունը:  
12 Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ. ԺԳ դար, Կազմեց Ա. Մաթեոսեան, Երեւան, 1984, էջ 105:  
13 Նոյն տեղում, էջ 112:  
14 Նոյն տեղում, էջ 178:

8 Դիւան հայ վիճագրութեան, պրակ I, էջ 58:  
9 Դիւան հայ վիճագրութեան, պրակ X, էջ 44-45:

ցատրել «տղայ», «մանուկ», «պատանի» զուգահեռ բնութագրումները:

Պարոյր Մուրադեանը միանգամայն իրաւացիօրէն կարծում է, որ Շահնշահ Ա-ի տարիքի վերաբերեալ Վարդան Արեւելցու տեղեկութիւնը սրբագրման կարիք ունի: Ըստ պատմիչի՝ Ջաքարէ Ամիրսպասալարը վախճանուել է «թողլով տղայ մի հնգամեայ Շահնշահ անուն»<sup>15</sup>, մինչդեռ Շահնշահին հայրը յիշատակում է դեռեւս 1201 թ. Հառիճի արձանագրութիւնում, հետեւաբար՝ Շահնշահը հօր մահուան պահին կը լինէր առնուազն 11 տարեկան: Այսպիսով՝ ահնայտ է, որ պատմիչի բնագրի «ե»-ն կամ «է»-ն պէտք է սրբագրել «ժե»-«ժէ»-ով<sup>16</sup>: Առաջին կամ երկրորդ տարբերակին վճռականօրէն կարելի է նախապատուութիւն տալ եւ հարցի վերջնական լուծում առաջարկել, եթէ հաշուի առնենք պատմական անցուղարձերի ժամանակագրութիւնը եւ տրամաբանութիւնը: Շահնշահի ծննդեան թուական հնարաւոր չէ համարել 1195 թ., քանի որ այդ տարում Ջաքարէ Բ-ն դեռեւս չէր ազատագրել Ամբերդը (1196 թ.), իսկ այդ իրազատութիւնից յետոյ միայն նա ստացաւ «շահնշահ» տիտղոսը<sup>17</sup>: Հետեւաբար՝ Շահնշահը ծնուել է 1197 թ., այսինքն՝ Ամբերդի առումից քիչ անց, եւ նրա անուանակոչութիւնը տեղի է ունեցել այդ կարեւոր իրադարձութեան անմիջական տպաւորութեան ներքոյ: Ստացում է, որ 1217-1218 թթ. նա կը լինէր 20-21 տարեկան, այսինքն՝ աւելի շուտ եղել է «պատանի» (մեր՝ ժամանակակից ընկալմամբ), քան «մանուկ»: Ուստի ինչպէս որ նկատի է ու-

նեցել նրա տարիքը ճիշտ հօր մահուան ժամանակահատուածում, այլապէս 1232 թ. Շահնշահն արդէն եղել է 35 տարեկան հասուն այր: Այսպիսով՝ Վարդան Արեւելցու վկայութեան բնագիրը իրօք շտկման կարիք ունի, ընդ որում՝ «ժե»-ով. «հնգամեայ»-ն անհրաժեշտ է ընթերցել «հնգամասնամեայ»:

Բարդութիւնների հետ է կապուած Շահնշահ Ա-ի դբադեցրած պաշտօնների հարցի լուսաբանութիւնը, քանի որ Վրացական թագաւորութեան արքունիքում իրենց ձեռքբերումները Ջաքարեանները յաճախ պատկերացրել են իրենց ընդհանուր տոհմական, ընդ որում՝ ժառանգական սեփականութիւն: Նրանց թողած արձանագրութիւնների բանաձեւային մասերում պաշտօնների յստակեցման խնդիրը որոշ դէպքերում հետեւողականօրէն շրջանցուել է<sup>18</sup>, ինչը եւ թոյլ է տալիս ենթադրել, թէ այդ երեւոյթը պատահական չէ: Այս առումով բնութագրական է Գաղան Լօռեցու 1220 թ. արձանագրութեան նախաբանը, որը փորագրուել է «ի թագաւորութիւնն Լաչին, ի պատրոնութիւնն մեծի... (վնասուած անունն, անշուշտ, Իւանէ Աթաբեկինն է - Հ. Մ.) եւ զարգանալն Շահնշահի եւ Աւագի»<sup>19</sup>: Երկու հօրեղբորորդիների «զարգանալ»-ուց, այսինքն՝ չափահաս դառնալուց յետոյ է, որ որոշուելու էր տոհմական դարձած արքունի պաշտօնների ճակատագիրը: Դժուար է, սակայն, պատկերացնել, որ Ջաքարեանների հայեացքներն ընդունելի են եղել նաեւ Վրացական թագաւորութեան տիրակալների համար: Հասկանալի է, որ արքունի պաշտօնները չէին համարուելու տոհմային ժառանգութիւն, թէեւ մեծատոհ-

15 Վարդան վարդապետ, Հաւաքումն Պատմութեան (Ռրատարակիչ՝ Հ. Ղեւոնդ Ալիշան), Վենետիկ, 1862 (վերահրատ. Երեւան, 2001), էջ 142:  
16 Տե՛ս Պ. Մուրադեան, Հայաստանի վրացերէն արձանագրութիւնները, Երեւան, 1977, էջ 104:  
17 Ա. Թաթիւեան, Կօշի կոթողը եւ Գրա արձանագրութիւնը, «Պատմա-բանասիրական հանդէս», 1968, թիւ 2, էջ 201, Պ. Մուրադեան, Աջ. աշխ., էջ 105:

18 Տե՛ս Դիւան հայ վիմագրութեան, պրակ I, էջ 4, 7, պրակ IV, էջ 22, Գ. Յովսէփեան, Խաղբակեանք կամ Պոռեանք հայոց պատմութեան մէջ, Անթիլիաս, 1969, էջ 199, 302: Հմմտ. Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ. ԺԳ դար, էջ 112):  
19 Տե՛ս Դիւան հայ վիմագրութեան, պրակ IV, էջ 213:

միկների առանձին ընտանիքներ իրենց իրաւունքները յաջորդ սերնդին փոխանցելու միտումներ յաճախ էին դրսեւորում: Պալատական բարձրագոյն գործակալութիւնների ղեկավարի դիրքը մեծածաւալ պարտականութիւնների կատարման հետ էր կապուած եւ չէր կարող թափուր թողնուել: Այլ հարց է, որ Ջաքարեանների տարբեր տոհմաճիւղերի փոխյարաբերութիւններում պաշտօնների հարցը ներքին վիճարկումների առարկայ է դարձել: Վրաց արքունիքի պաշտօնական տեսակէտը լիովին արտացոլուած է «Քարթլիս ցխովրեբայի» կազմում ընդգրկուած պատմական երկերում, բայց դրանք վերաբերում են բաւականաչափ երկարատեւ ժամանակահատուածի իրադարձութիւնների եւ ստուերում են թողնում փոքրիկ ժամանակամիջոցների նշանակումները: Ցաւօք, սկզբնաղբերները տուեալներ չեն պահպանել այն մասին, թէ ինչպէս են լուծել արքունի բարձր պաշտօնները Ջաքարեանների տոհմի տարբեր ներկայացուցիչներին յանձնելու խնդիրը, նախ՝ Գէորգի-Լաչան (1207/1210-1223), ապա՝ Ռուսուղան թագուհին (1223-1245):

Հայերէն վիմագրերն ընդամէնը հնարաւորութիւն են ընձեռում արձանագրելու, որ պաշտօնների համար ներտոհմային բախումները երկար տարիներ են տեւել: Այս առումով յատկանշական է այն փաստը, որ որդու իրաւունքները դեռեւս 1200 թ. արձանագրել է Ջաքարէ Ամիրսպասալարը. «յամի սպասալարութեանն Ջաքարէի եւ որդւոյ իւրոյ Շահնշահի եւ եղբար իւրոյ Յովանէի»<sup>20</sup>: Ծիշտ է, այսպիսով նշուած են նաեւ Իւանէի իրաւունքները ամիրսպասալարի պաշտօնի նկատմամբ, բայց եւ այնպէս, աւելի կարեւոր է թուում այն նոր երեւոյթը, որ հաւաստանշուած են նաեւ Շահնշահի յաւակնութիւնները: Հայրական պաշտօնները ժառանգելու Շահնշահի ձգտումը, հասկանալի պատճառներով,

20 Հ. Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 62:

րով, առաւել վառ է արտայայտուել նրա գլխաւոր նստավայր Անիում: Այսպէս՝ Մխիթարիչ Գանձակեցին Շահնշահին մանդատութիւնը նու աւիրսպասալար է համարում 1215 թ.<sup>21</sup>: Շահնշահը այդ նոյն տիտղոսներով է յիշատակուած նաեւ 1216 թ.<sup>22</sup>, մինչդեռ 1220 թ. նա հանդէս է գալիս որպէս միայն ամիրսպասալար<sup>23</sup>: Օձունի 1228 թ. արձանագրութիւնը<sup>24</sup>, որտեղ Շահնշահ Ա-ն որպէս՝ գլխաւոր գօրահրամանատար է յիշատակուած, թոյլ է տալիս կարծելու, որ նոյնիսկ Աւագի ամիրսպասալար դառնալուց յետոյ էլ նա հետեւողականօրէն ձգտել է վերադարձնել հայրական պաշտօնը: Յետթամարեան ժամանակաշրջանի պատմութիւնն աւանդող «Վրաց ժամանակագրութիւնը» («Հարիւրամեայ մատեան») ցոյց է տալիս՝ ինչպէս է Իւանէ Աթաբեկն ապահովել ամիրսպասալարի աշտօնի անցումը որդուն՝ Աւագին: 1225 թ. խորեզմշահ Ջալալ աղ-դինի դէմ տրուած Գառնիի ճակատամարտում Իւանէն անձամբ էր գլխաւորում հայ-վրացական զօրքերը, բայց մինչ այդ արդէն դադարեցրել էր ակտիւ գործունէութիւնը, քանի որ «ծերացած էր եւ առանց յայտնելու, գաղտնի վանական էր դարձել»<sup>25</sup>: Ինչպէս երեւում է, Իւանէի՝ միայն կարեւոր դէպքերում ասպարէզում յայտնուելը պայմանաւորուած է եղել նաեւ այն հանգամանքով, որ երկու հօրեղբորորդիների «զարգացման» ընթացքը արդէն աւար-

21 Տե՛ս Դիւան հայ վիմագրութեան, պրակ I, էջ 1-2: Արձանագրութեան վերծանութեան մէջ, հաւանաբար, տպագրական վրիպակ է ապրդել: Այստեղ վիմագրի տարեթիւն ՈԿԳ է, մինչդեռ գրչագրում եւ լուսանկարում յստակօրէն ընթերցում է ՈԿԴ:  
22 Նոյն տեղում, էջ 4:  
23 Նոյն տեղում, էջ 17:  
24 Տե՛ս Ս. Աւագեան, Վիմական արձանագրութիւնների բառարանութիւն, էջ 205, Դիւան հայ վիմագրութեան, պրակ IX, էջ 296:  
25 Երեւանի թանգարանի ձեռագրերի ցուցակ, Երեւան, 1968, էջ 536, Վրաց ժամանակագրութիւն, էջ 60:



նախդիրներին որեւէ մէկը: Դրանցից երկրորդի գործածութեան հաւանականութիւնը քիչ է, քանի որ նրա գրութիւնը աւելի մեծ տեղ պէտք է զբաղեցնէր, եւ, բացի այդ, աւելի փոքրաթիւ են «սալին» բառի տառերի հետ համընկնումները: Շատ աւելի մեծ է «վասնի» գործածութեան հաւանականութիւնը, առաւել եւս, որ հիմքեր կան բառակցքի «ս»-ն «վ» ընթերցելու համար: Արձանագրութեան մէջ «վ» տառը հանդիպում է միայն մէկ անգամ՝ «նզովեալ» բառի մէջ, բայց նրա արտաքին տեսքն այնքան առանձնայատուկ է, որ հիմքեր է ընձեռում «ս»-«վ» շփոթը հասկանալու համար: «վ»-ի ձախակողմեան ուղղաձիգ ստեղծը, որը սկզբնապէս գրեթէ նոյնքան երկար է եղել որքան աջակողմեանը<sup>37</sup>, Արթիկի վիմագրում բաւականաչափ երկար է եւ դիւրութեամբ կարող էր «ս» ընթերցուել: Եթէ փորձենք «ս»-ին յաջորդ տառապատկերը վերծանել, ապա դժուար չի լինի բացատրել, թէ ինչպէս է առաջացել «լի» ընթերցման գայթակղութիւնը: Սեղրակ Բարխուդարեանը «ս»-ի առկայութիւնը մերժել է, քանի որ բառակցքի տառը «ս» է ընթերցել: Այսպիսով լիովին հնարաւոր է արձանագրութեան այս հատուածը վերականգնել «վասնիմ յերկարկենդանութեան եւ զաւակաց իմոց եւ եղբաւրն իմոյ Աւագին» ձեւով:

Արթիկի արձանագրութիւնից պարզուում է, որ Ջաքարեան իշխանաց իշխանն արդէն 1222 թ. առնուազն երկու որդի է ունեցել, ինչն անսպասելի համարել չի կարելի: Աւելին, Արթիկի արձանագրութեան վկայութիւնը հարկադրում է ուշադրութիւն դարձնել Անիում 1215 թ. Տիգրան Հոնենցի թողած վիմագրի երկու կարեւոր արտայայտութեան վրայ, որոնք երբեւիցէ չեն վկայակոչուել Ջաքարեանների պատմութեան լուսաբանութեան նպատակով: Հան-

դիսաւոր ոճով շարադրուած արձանագրութեան մէջ Տիգրան Հոնենցը նախ նշում է, որ շինարարական աշխատանքները ձեռնարկել է «վասնի յերկարկենդանութեան տէրանց իմոց (նկատի ունի Ջաքարիա Ամիրսպասալարին եւ Շահնշահ Ա-ին – Հ. Մ.) եւ որդոց նոցա», այսինքն՝ Հայր եւ որդի Ջաքարեանների ժառանգների մասին խօսում է յոգնակի թուով: Այնուհետեւ արձանագրութեան հեղինակը պարտադրում է նորակառոյց եկեղեցու քահանաներին, որ «անխափան պատարագ մատչի վասն արեւշատութեան տէրանց իմոց Շահնշահի եւ որդոց իւրոց»<sup>38</sup>: Այսպիսով ստացւում է, որ 1197 թ. ծնուած Շահնշահ Ա-ն 18 տարեկան հասակում արդէն ընտանիք էր կազմել եւ առնուազն երկու որդի ունէր: Ընդ որում՝ այս իրողութիւնը լիովին տեղաւորուում է ժամանակաշրջանի բարքերի շրջանակում: Այս կապակցութեամբ յիշատակելի ամենակնյայտ փաստը Շահնշահի հօրաքոյր Նանայի եւ վերջին Կիրիկեան Աբասի ամուսնութիւնն է: Ըստ Կիրակոս Գանձակեցու՝ «կեցեալ Աբաս ամս երկու ընդ ամուսնոյն իւրոյ, վախճանի ամաց ինն եւ տասանց»<sup>39</sup>, այսինքն՝ ամուսնանալիս եղել է 17 տարեկան: Աբասի եւ Շահնշահ Ա-ի պարագայում առկայ է երկու ամուսնութիւնների համար էլ ընդհանուր մէկ հանգամանք. երկուսի հայրերն էլ մահացած են եղել ոչ վաղ անցեալում (Աբասի հայր Կիրիկէն վախճանուել է, երբ որդին 12 տարեկան է եղել) եւ շուտափոյթ ամուսնութիւնները կոչուած են եղել լուծելու ժառանգականութեան ապահովման հարցը:

Ովքե՞ր են Շահնշահ Ա-ի որդիները, որոնց մասին յիշատակում է Արթիկի արձանագրութեան հեղինակը: Պատմելով Շահնշահի Ա-ի որդիների մասին՝ Կիրակոս Գանձակեցին նշում է. «որդիք բազումք

37 Դիւան հայ վիմագրութեան, պրակ I, էջ 63:  
38 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Աշխատասիրութեամբ Կ. Մելիք-Օհանջանեանի, Երեւան, 1961, էջ 152:

37 Հայկական սովետական հանրագիտարան, հտ. 11, Երեւան, 1985, էջ 221:

էին նորա՝ Ջաքարէ, եւ Աւագ Սարգիս (տպ. Աւագ, Սարգիս), եւ Արտաշիրն, եւ Իււանէ»<sup>40</sup>: Ջաքարէի աւագ որդի լինելը պատմիչը շեշտում է, ինչ վերաբերում է միւսներին, ապա դժուար է պնդել, որ պատմիչը պահպանել է յաջորդականութիւնը եւ նրանց յիշատակել է ըստ ծննդեան տարիների: Առաւել եւս որ Կիրակոս Գանձակեցին նշել է Շահնշահ Ա-ի մեզ յայտնի եօթ որդիներից միայն չորսին: Արթիկի արձանագրութիւնում յիշատակուած «որդոց» շարքում, Ջաքարէից բացի, կարելի է նկատի ունենալ նաեւ Աւագ Սարգսին եւ Արտաշիրին, կամ նրանցից որեւէ մէկին: Առաջինը վախճանուել է 1269 թ.<sup>41</sup>, իսկ երկրորդը վերջին անգամ յիշատակուում է 1261 թ.<sup>42</sup>: Աւելի քիչ է հաւանական, որ Շահնշահ Ա-ն նկատի է ունեցել նաեւ Իււանէին, քանի որ վերջինս եռանդուն գործունէութիւն էր ծաւալել Հէնց 1260-ական թթ. եւ մահացել է 1284 թ. յետոյ<sup>43</sup>, այսինքն՝ կարելի է ենթադրել, որ Կիրակոս Գանձակեցու նշած եղբայրներից աւելի ուշ է ծնուել:

Շահնշահ Ա-ն յանուն իր եւ մերձաօր ազգականների «յերկարկենդանութեան» ակնյայտօրէն զիջում է կատարում

40 Նոյն տեղում, էջ 393:  
41 Տե՛ս Մանր ժամանակագրութիւններ, հտ. I, էջ 44, Սամուէլ Աճեցի եւ շարունակողներ, Ժամանակագրութիւն, Աշխատասիրութեամբ Կ. Մաթետեանի, Երեւան, 2014, էջ 254:  
42 Տե՛ս Մ. Ա. Օրբեռն, *Надписи Мрена*, «Հայագիտական հետազոտութիւններ», պրակ Ա, Երեւան, 1974, էջ 41:  
43 Իււանէ Բ-ն 1284 թ. ուղեկցում էր Վրաց թագաւոր Դեմետրէ Բ Աճմուրացին, երբ Ահմատ իլխանը (1282-1284 թթ.) անցն ուղարկեց խորասան պատերազմելու գաֆի յաւակորդ Արղունի (1284-1291 թթ.) դէմ (տե՛ս յճԾՕՂՇՈՅ ՅԵՐՅԵՅԾՅ, ՅՅ. 621, Վրաց ժամանակագրութիւն, էջ 152): 1291 թ. սկսած Թահմաշախան տունը գլխաւորում էր Գրա որդին՝ «Աթապակ ամիրսպասալար» Թահմաշ Բ-ն (Դիւան հայ վիմագրութեան, պրակ I, էջ 68): Հետեւաբար՝ Իււանէ Բ-ն մահացել է 1284-1291 թթ. միջեւ ընկած ժամանակահատուածում:

տեղական բնակչութեանը: «Սահմանեցի Ջաքարուց շարիատն» հանդիսաւորապէս յայտարարում է իշխանաց իշխանը: Հարց է առաջանում, թէ ո՞ր բնակավայրն է արժանացել Ջաքարեանների բարեհաճ վերաբերմունքին: Մխալուած չենք լինի, եթէ ենթադրենք, որ հարկային առանձնաշնորհուած վերաբերել է Հէնց Արթիկի բնակիչներին, մինչդեռ Սեղրակ Բարխուդարեանի վերծանութեան մէջ առկայ է «զարդուց» ընթերցումը: Սակայն ամէն ինչ հասկանալի կը դառնայ, եթէ «զարդուց» տեղանուն մէջ սխալ ընթերցուած դիտարկենք նրա սկզբնատառը: Եթէ «Ջ»-ն փոխարինենք «Յ»-ով, ուրեմն իրաւունք կ'ունենանք պնդելու, որ Շահնշահ Ա-ն նկատի է ունեցել Լմբատավանքի 1216 թ. արձանագրութիւնից յայտնի «Յարդք» բնակավայրը<sup>44</sup>: Որեւէ կասկած լինել չի կարող, որ Շահնշահ Ա-ն բնակավայրը յիշատակել է յոգնակի սեռականով: «Մերձ ի Յարդք» արտայայտութեան մէջ «ի» նախդիրի առկայութիւնը յստակօրէն վկայում է, որ տեղանուն սկզբնական ձեւը եղել է ոչ թէ «Արդք»<sup>45</sup>, այլ «Յարդք»: Հնարաւոր է անգամ ենթադրել, որ այդ ժամանակաշրջանում Արթիկ տեղանունը արտասանել են կիսաձայն «յ»-ն արտաբերելով<sup>46</sup>:

Որոշակի հետաքրքրութիւն է ներկայացնում շարիաթի վերաբերեալ Շահնշահ Ա-ի լրացումը՝ «ի ժ-նին զամենն»: Շարիաթը հողային ունեւան է, որ կարող էր գանձուել տարբեր դիւղատնտեսական մշակոյթներից: Հարկի չափը անփոփոխ է եղել՝ ամբողջ բերքի մէկ տասներորդ մասը, ուստի եւ Շահնշահ Ա-ն նշում է ժ թիւը: Որոշ դէպքերում հարկային առանձնաշնորհուած մասամբ են կատարել: Օրինակ՝ Շահնշահ Ա-ի ժառանգներից Իււանէ Բ-ն կոչում ազատել է բնակիչներին միայն

44 Դիւան հայ վիմագրութեան, պրակ X, էջ 70:  
45 Նոյն տեղում, էջ 71, ծանօթ.:  
46 Հմմտ. ժողովրդական խօսուածքում «Աշտարակի» «Հաշտարակ» արտասանութիւնը:

«վերին [հանդա]սահմանի շարիաթ»-ից<sup>47</sup>: Յարդը-Արթիկի պարագայում տեղական տիրակալը հրաժարուել է հարկային ամբողջ տուրքից՝ զիջելով «զամենն»: Սովորաբար՝ արձանագրութիւնների հեղինակները հարկային զիջումը նշում են «թողի», «բարձի» բնութագրումներով, իսկ «սահմանեցի» բայաձևով բացորոշում են իրենց պարտաւորեցնող վճիռները: Ուստի զարմանք է յարուցում «սահմանեցի» ձևակերպումը, որը ճիշտ հասկանալու համար պէտք է դիմել այլ արձանագրութիւնների նիւթին: Ինչպէս երեւում է, նախորդ ժամանակահատուածում Արթիկի բնակիչներին սկսել են չափից աւելի մեծ պահանջներ ներկայացնել, ուստի կարիք է զգացուել սահմանափակելու հարկային պաշտօնեաների ախորժակը: Ճիշտ ինչպէս Անիի արձանագրութիւնում, արդէն մոնղոլական ժամանակաշրջանում քաղաքի պատրոնների կողմից «զամենայն հարկապահանջութիւն բարձուցին»-ը բնութագրւում է «յառաջին սահմանա դարձուցին» արտայայտութեամբ<sup>48</sup>, այնպէս էլ Արթիկում Շահնշահ Ա-ն ընդամէնը վերականգնել է աւանդական հարկաչափը:

Կասկած չկայ, որ վիմագրի վերջին հատուածի վերականգնումները եւս պէտք

է հիմնուեն ժամանակաշրջանի արձանագրութիւնների անէծքի. բանաձևերի քննութեան վրայ: Սակայն խնդիրն այն է, որ Արթիկի արձանագրութեան եզրափակիչ հատուածն իր կատարեալ զուգահեռը չունի անէծքի ու օրհնանքի բանաձևերով հարուստ հայ վիմագրութեան մէջ<sup>49</sup>: Ուստի ուշադրութեան են արժանի արձանագրութիւններից յայտնի այն բնագրական վկայութիւնները, որոնք պարունակում են «կամ նախանձու» արտայայտութիւնը: Դրանցից է Հաղբատի ու Սանահինի միջեւ գտնուող Կայեան բերդի 1233 թ. արձանագրութիւնը, որտեղ նախապայմանը այսպիսին է. «առաջնորդ որէն ի կամս իւրո կամ նախանձու, կամ ծուլութեամբ. կամ կաշառաւ զսայ ի Հաղբատա հանէ...»՝ յաջորդող նզովքի բանաձևով<sup>50</sup>: Սակայն անգամ այս վկայութիւնը վստահելի հիմք չի ընձեռում հաւանական որեւէ ենթադրութիւն անելու, թէ «ութիւն»-ով աւարտուող ի՞նչ բառ է նախորդել գործիական հոլովով դրուած «նախանձ» բառին:

Ամէն ինչից երեւում է, որ արձանագրութեան վերջում փորագրող գրիչը նշել է իր գերզաստանի անուանումը եւ սեփական անձնանունը:

Այսպիսով՝ Արթիկի 1222 թ. արձանագրութեան քննութիւնը թոյլ է տալիս վերականգնել կամ լուսաբանել բնագրի որոշ հատուածներ, ինչպէս նաեւ՝ պարզաբանել Զաքարեանների տոհմի պատմութեան առանձին դրուագներ:

49 Համապատասխան անվանումները հանդիպում են Ս. Յարութիւնեանը, տե՛ս նրա Անէծքի եւ օրհնանքի ժանրը հայ բանահիւսութեան մէջ, Երևան, 1975, էջ 40-86:  
50 Դիւան հայ վիմագրութեան, պրակ IX, էջ 240:

47 Տե՛ս Պ. Մուրադեան, Ա. աշխ., էջ 100-101: Արձանագրութեան առաջին հրատարակիչ Ա. Շահնիճեան այն վերագրել է Իւանէ Ա Աթաբէկին (Տե՛ս Ա. Գ. Շահնիճե, *Грузинская надпись XIII века в селе Кож.* - Известия Института рукописей АН Грузинской ССР, I, Тбилиси, 1959, с. 7-19), որին հետեւել է Պ. Մուրադեանը: Սակայն փաստերը վկայում են աւելի ուշ թուագրման օգտին: Մասնատրապէտ՝ Կոջի վրացերէն արձանագրութիւնում «մոռացուած» է Իւանէ Ա-ի միակ որդի Աւագը, մինչդեռ յիշատակուում են Իւանէ Բ-ի որդիները՝ Օսինշահ Բ-ն եւ իր եղբայրները, որոնք յայտնի են բազմաթիւ այլ սկզբնաղբիւրներից: Բացի այդ, վիմագրի հեղինակն իրեն կոչում է մանդատորութիւն, իսկ Իւանէ Ա-ն երբեք չի վարել այդ պաշտօնը: Փոխարէնը՝ Իւանէ Բ-ն իր քոք երկար տարիներ Արեւելափրացական թագաւորութեան մանդատորութիւնը էր:  
48 Դիւան հայ վիմագրութեան, պրակ I, էջ 1:

## ՀԵԹՈՒՄ ԿՈՒԻԿՈՍՑՈՒ «La Fleur des Histoires de la terre d'Orient» ԵՐԿԻ ԳՐԱԲԱՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ

Լիանա Դալլաքեան

«Ծաղիկ պատմութեան Արեւելից աշխարհի» «La Fleur des Histoires de la terre d'Orient», երկը գրուել է Հոռմի Կղեմէս է. պապի (1305-1314) պատուէրով 1307 թ.: Որպէս Կիպրոսի կառավարչի դեսպան Կղեմէս է. պապի ընդունելութեան արժանացած Հեթում Կոռիկոսցին նրա կողմից յանձնարարութիւն է ստացել գրելու Արեւելքի երկրների մասին մի գործ: Յրանսիայի Պուատիէ քաղաքի վանքում Հեթումն իր պատմութիւնը բերանացի պատմել է Նիկոլաս Ֆալկոն անունով վանականին, որն էլ շարագրել է երկը միջին ֆրանսերէնով, ապա՝ թարգմանել լատիներէն:

Ուսումնասիրելով լատիներէն թարգմանութիւնը՝ համոզուում ենք, որ Հեթում Պատմիչը տեղում խմբագրել է այն եւ կատարել աւելացումներ, որոշակի ճշգրտումներ: Դրանից յետոյ նա երկն անձամբ ներկայացրել է պապին: Գրքի ստեղծման պատմութեանը մենք անդրադարձել ենք առանձին յօդուածով<sup>1</sup>:

Հեթում Կոռիկոսցու երկը դեռեւս միջնադարում մեծ հետաքրքրութիւն է առաջացրել եւ թարգմանուել է եւրոպական բազմաթիւ լեզուներով<sup>2</sup>, սակայն մինչեւ օրս գոյութիւն չունի ամբողջական հայերէն թարգմանութիւն: «Ծաղիկ պատմութեանցը» հայերէն՝ գրաբար, թարգմանուել է միայն ԺԹ. դարում Մխիթարեան միաբանութեան վարդապետ Հ. Մկրտիչ Աւզերեանի կողմից՝ «Հեթում պատմիչ թաթարաց, յեղեալ ի լատին օրինակէ ի հայ բարբառ ի ձեռն Հ. Մկրտիչ վարդապետի Աւզերեանէ» վերնագրով (Վենետիկ, 1842, երկրորդ տպագրութիւն՝ Վենետիկ, 1951): Երկը թարգմանուել է ոչ թէ բնօրինակից, այլ լատիներէն թարգմանութիւններից մէկից, քանի որ սոյն հրատարակութեան վերնագրից ելնելով է, որ Հեթում Կոռիկոսցուն կոչել են նաեւ Հեթում Պատմիչ, երբեմն՝ «Հեթում պատմիչ թաթարաց», իսկ բուն երկը՝ «Պատմութիւն թաթարաց», որը ծագում է

2 Հեթում Կոռիկոսցու պատմութիւնը Փարիզում առաջին անգամ տպագրուել է 1510 թ., այնուհետև՝ 1517, 1529 և 1735 թթ., իսկ համեմատական բնագիրը ֆրանսիական ակադեմիան հրատարակել է 1906 թ. (RHC Arm. II Recueil des historiens des croisades, documents latins et francais, relative a l'Arménie, Paris, 1906, p. 110-254), վերահրատարակուել է 2002 թ.: Լատիներէնով տպագրուել է 1529, 1532, 1555, 1585, 1671 թթ.: ԺՁ. դարում հրատարակութիւններ են եղել բազմաթիւ այլ եւրոպական լեզուներով, մասնատրապէտ՝ գերմաներէնով (1534-ին Ստրասբուրգում), իտալերէնով (1535, 1559 և 1562-ին), իսպաներէնով (1595-ին Կորդոբայում), ֆլամաներէնով (1563-ին, 1664-ին և ևս 2 անգամ ԺԷ. դարի վերջին): Տպագրուել է նաև անգլերէնով (Լոնդոնում 1520 թ.): Լատիներէնից ռուսերէն Ն. Գորելովի ուսումնասիրութեամբ ու ծանօթագրութիւններով թարգմանուել է տպագրուել է 2006 թ. Սանկտ-Պետերբուրգում:

1 Լ. Դալլաքեան, Հեթում Պատմիչ Կոռիկոսցու «Ծաղիկ պատմութեանց Արեւելից աշխարհի» երկասիրութիւնը, «Էջմիածին», 2016, Ձ, էջ 84: Կոռիկոսցու երկի մասին տե՛ս նաև Գ. Զարբախեան, Պատմութիւն Հայերէն դարձման, Բ., Վենետիկ, 1878, Ֆ. Ֆէլտի, Հեթում Պատմիչ հեղինակ «Ծաղիկ պատմութեանց Արեւելեան աշխարհի» գրքին, Փարիզ, 1939, С. М. Мильный, «La flor des estoires de terres d'Orient» Gaitona как историко-географический источник по Востоку и по истории монголов, «Вопросы востоковедения», 1956, т. V, Claude Mutafian, Hethom de Korykos historien arménien un prince cosmopolite a l'aube du XIVe siècle, Cahiers de recherche médiévales, No. 1, Orleans, 1996, pp. 157-174, Կ. Մաթևուսեան, Հեթում Պատմիչ Կոռիկոսցուն և նրա ժամանակագրութիւնը, Երևան, 2011, և այլն: